

Արձանագրություն թիվ 3
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի 2015 թվականի
Օգոստոսի 27-ի նիստի

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ Հ. Արշակյանը:

Նիստին մասնակցում էին՝

- Հ. Հովհաննիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության
- Ա. Մարգարյան - վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
- Ս. Մինասյան - քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության ,
- Գ.Բաղդասարյան - մշակույթի և սպորտի վարչության պետ, հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
- Ա.Ադամյան - իրավաբանական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ.
Գյումրու զբաղվածության տարածքային կենտրոնի տնօրեն,
- Ա.Նիկողոսյան - հանձնաժողովի անդամ.
Հաշմանդամների <<Փյունիկ>> միության Գյումրու
- Ռ. Ռաշոյան - մասնաճյուղի ծրագրերի ղեկավար, հանձնաժողովի անդամ.
Գյումրու <<Հաշմանդամների ասոցիացիա>> ՀԿ նախագահ,
- Ա. Գյունաշյան - հանձնաժողովի անդամ.
ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ,
հանձնաժողովի քարտուղար:

Նիստին մասնակցում էին հրավիրվածներ՝

- Մ. Մանուկյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետի ժ/պ
- Գ.Տարասյան - <<Հայկական Կարիտաս>> ԲՀԿ գործադիր տնօրեն.
- Ա.Դիլանյան - <<Հաշմանդամների մարզամշակութային կենտրոն>> ՀԿ նախագահ.
- Ս.Գրիգորյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ.

Օրակարգ – Հաշմանդամներին հասարակություն ինտեգրելու ուղղությամբ 2015 թվականի

ընթացքում իրականացվող աշխատանքների մասին:

Լսեցին – Հանձնաժողովի քարտուղար Ա. Գյունաշյանի հաղորդումը հաշմանդամների

հասարակություն ինտեգրելու ուղղությամբ 2015 թվականի ընթացքում իրականացվող աշխատանքների մասին:

/Հաղորդում՝ Հ.Արշակյան - Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով մարզային

հանձնաժողովի նախագահ/:

Լսեցին - ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի տեղակալ Հ.Արշակյանի

հաղորդումը հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում 2014 թվականի

ընթացքում իրականացված աշխատանքների մասին:

Ելույթ ունեցան՝ Ս.Մինասյանը, Հ. Հովհաննիսյանը, Ռ.Ռաշոյանը, Ս.Գրիգորյանը:

Նիստում քննարկումներն ամփոփեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ Շիրակի մարզպետի

տեղակալ Հ. Արշակյանը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն հաշմանդամների հասարակություն ինտեգրման ուղղությամբ 2015 թվականին իրականացվող աշխատանքների մասին հաղորդումը:
2. Հանձնարարել աշխատակազմի սոցիալական ապահովության և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններին / Ա. Գյունաշյան, Մ. Մանուկյան ժ/պ// մարզում իրականացվող աշխատանքներում ակտիվորեն համագործակցել հասարակական բարեգործական կազմակերպությունների հետ, ցուցաբերելով անհրաժեշտ աջակցություն միջոցառումների կազմակերպման հարցերում :

Որոշումն ընդունվեց միաձայն:

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Արշակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա.Գյունաշյան